ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
«ԿԱՐԵՆ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0033, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 78, հեռ.՝ 060 469200, ֆաքս 27 30 97, E-mail: info@yermetro.am, www.yermetro.am

№ 39/02-07-05 «09» 01 2020թ.

ՆԻԿՕ-ՏԵԿ ՍՊԸ
Տնօրեն՝ Մ.Խաչատրյանին

Հարգելի պարոն Խաչատրյան

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ միջև 26.07.2019թ. կնքված ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24 ծածկագրով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-ժամանակացույցով նախատեսված ապրանք, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

«ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ խախտել է Պայմանագրի 1.1 կետով ամրագրված պահանջները և չի կատարել պայմանագրի անբաժանելի մասը կազմող N1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջները՝ չի մատակարարել երկելեմենտանի սեկտորային խրոցակային ռելե՝ (13727-00-00B) ДСШ-2 տիպի, 200 հատ, միավորի գինը՝ 106800 ՀՀ դրամ, ընդհանուր 21360000 (քսանմեկ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով :

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408 հոդվածի համաձայն, Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցի, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347 հոդվածի համաձայն, «Պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան»:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմաագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի

Ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ և «ՆԻԿՕ-ՏԵԿ» ՍՊԸ միջև 26.07.2019թ. կնքված ԵՄ-ԳՀԱՊՁԲ-19/24 ծածկագրով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիրը 05.12.2019թ. կնքված Համաձայնագիր 2-ի համաձայն մասնակի լուծվել է:

Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ տեղեկացնում եմ Ձեզ, որ սույն Պայմանագիրը մասնակի լուծելու վերաբերյալ համաձայնագիրը, որը նաև հրապարակվել է www procurement.am ինտերնետային կայքում, սույն պայմանագրի կատարման ապահովման տուժանքի համաձայնագիրը և վճարման պահանջագիրը ներկայացվելու է Վճարող բանկին ՝ այն չկատարված մասին համապատասխան կատարման ընդունելու համար:

Տնօրենի ժ/պ՝ Գ.Ավետիսյան